Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ ԿԳՄՍՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը

Սամվել Հարությունյան

2. Զբաղեցրած պաշտոնը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության գիտության կոմիտեի նախագահ

3. Գործուղման վայրը և ժամկետները

Դուբնա (Ռուսաստանի Դաշնություն), 2019թ. մայիսի 29-ից 31-ը

4. Հրավիրող կողմը

Միջուկային հետազոտությունների միացյալ ինստիտուտ (այսուհետ՝ ՄՀՄԻ)

5. Գործուղման նպատակը (աշխատանքային որ խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)

Մասնակցություն «Քիմիական տարրերի պարբերական աղյուսակի ներկան և ապագան» խորագրով սիմպոզիումի աշխատանքներին

6. Քննարկված թեմաները

- Մենդելեևի քիմիական տարրերի պարբերական աղյուսակի 150-ամյակ
- ՄՀՄԻ-ում գիտական աստիճանաշնորհման մասնագիտացված խորհուրդների կազմում նոր մասնագետների ընդգրկման ձևաչափերը,
- սեյսմիկ անվտանգության և երկրաբանության ոլորտներում նախատեսվող համագործակցային ծրագրեր,
- և այլ հարցեր:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանը մասնակցել է «Քիմիական տարրերի պարբերական աղյուսակի ներկան և ապագան» խորագրով սիմպոզիումի բոլոր միջոցառումներին, որոնց ընթացքում մեծ հանդիսությամբ նշվել է Մենդելեևի քիմիական տարրերի պարբերական աղյուսակի 150-ամյակը, ինչպես նաև հայազգի անվանի գիտնական Յուրի Հովհաննիսյանի մեծարման արարողությունը՝ պարբերական աղյուսակում մի շարք քիմիական տարրերի համալրման ուղղությամբ կատարած զգալի աշխատանքների համար:

Դուբնա այցի շրջանակներում ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանն ունեցել է մի շարք հանդիպումներ.

- Դուբնայի պետական համալսարանի ռեկտոր Դ. Ֆուրսաևի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է մագիստրատուրայում սովորող ուսանողների համար փոխանակային ծրագրերի կազմակերպման հարցը:
- ՄՀՄԻ գիտական խորհրդի քարտուղար Ալեքսանդր Սորինի հետ հանդիպման ընթացքում քննարկվել է գիտական աստիճանաշնորհման մասնագիտացված խորհուրդների ձևաչափը,
- ՄՀՄԻ տնօրեն Վ. Մատվեևի և Յուրի Հովհաննիսյանի հետ եռակողմ հանդիպմանը քննարկվել են Դուբնա-Հայաստան համագործակցության շրջանակներն ընդլայնելու և նոր ոլորտներ ընդգրկելու խնդիրները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Դուբնայի պետական համալսարանի ռեկտոր Դ. Ֆուրսաևի հետ հանդիպման ընթացքում պայմանավորվածություն է ձեռք բերվել մագիստրատուրայում սովորող ուսանողների համար փոխանակային ծրագրեր իրականացնելու համար հուշագրի նախագիծ նախապատրաստելու շուրջ աշխատանքներ սկսելու մասին:

ՄՀՄԻ տնօրեն Վ. Մատվեևի և Յուրի Հովհաննիսյանի հետ հանդիպմանը քննարկվել են ներկա համագործակցային կապերը, ինչպես նաև սեյսմիկ անվտանգության և երկրաբանության ոլորտներում համագործակցության ակտիվացման ուղիները:

9.Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

2019թ. մարտի 24-ից 26-ը կայացած ՄՀՄԻ անդամ-պետությունների կառավարությունների լիազոր ներկայացուցիչների կոմիտեի նստաշրջանին ներկայացվել և քննարկվել էին ՄՀՄԻ կողմից գիտական աստիճաններ շնորհելու իրավունք իրացնելու ուղղությամբ ձեռնարկած քայլերը: Այս նպատակով 2019թ. մայիսի 30-ին ՄՀՄԻ գիտական խորհրդի քարտուղար Ալեքսանդր Սորինի հետ հանդիպման ընթացքում վերջինիս և ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի միջև սկզբունքային համաձայնություն է ձեռք բերվել առ այն, որ վերոնշյալ խորհուրդները կունենան միջազգային ձևաչափ, որի արդյունքում ՄՀՄԻ գիտական աստիճանաշնորհման մասնագիտացված խորհուրդների կազմում կարող են ընդգրկվել նաև հայ գիտնականներ:

10. Ստորագրությունը, ամսաթիվը

05.06.2019թ.